

ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ.

Ռուս-Հայերէն իրաւաբանական առձեռն
բառարան 1919 թ. Թիֆլիս: Հրատարակու-
թիւն Հայ-Փաստի:

1.

Մեր ձեռքի տակն է այս գիրքը, որ Թիֆլիսի Հայ փա-
տարանների կազմածն ու հրատարակածն է: Գործն ինքնին ներ-
կայացնում է մեծ հետաքրքրութիւն, երբ ի նկատ ենք առնում,
որ մեր նոր կազմուղ պետութեան համար առաջնակարգ պահանջ
է՝ հայրենի վերածել և պետական փունկցիաների համար ունե-
նենալ հայացրած տերմինների այնպիսի պաշար, որ լիացնէ
զգացող բացը թէ պահանջն է արդար ու անհրաժեշտ, և թէ
իւրաքանչիւր գործ, որ ձգտում է այդ պահանջը բաւարարել:
Այս կողմից միայն ողջունել կարող ենք Հայ-Փաստի գործն ու
աշխատանքը: Մա ընդհանրապէս. —

Գիտական տերմիններ վերաբառադրելու համար մի ամենա-
կարևոր պահանջ՝ անխառնութիւն է ու անհրաժեշտ, դա այն մտա-
ծելակերպն է, որով ղեկավարւելու է, կամ զննելու բնութիւն է այդ-
պիսի գործին ձեռնարկողը: Ամենից առաջ, այդպիսի մի, նոյն
իսկ փոքր, գործ գլուխ բերելու համար, հարկաւոր է ա. մտա-
ծել այն լեզուով, որին վերածում ես առաջադրեալ մի գործ.
այսինքն, եթէ թարգմանում ես, չլինի թէ թարգմանածդ բա-
ռացի թարգմանութիւն լինի. բ. տեղեակ լինել այն լեզուի պա-
շարին, այսինքն զբաղանդութեանն ու բառամթերքին, որին ձրդ-
տում ես վերածել տւեալ մի տերմին. գ. օտար տերմինի բո-
վանդակութեանը հակադրել աղգային մի տերմին — արդէն պատ-
րաստի կամ ստեղծած. այսինքն օտար տերմինի էութիւնը — միաքը
արտահայտել հայրենի ըմբռնողութեամբ. դ. օտարաբանութիւն-
ներից խառնութիւնով հանգերձ, դանց չառնել օտար այնպիսի
տերմիններ, որոնք համաշխարհային բնոյթ ունին և, լաւ հմուտ
լինել այն բնադաւառին, որից փոխադրութիւն անելն է ենթա-
դրւում. այս մասում պէտք է հասկանալ ոչ միայն գիտական
պատրաստութիւն, այլ նաեւ լեզուի հմտութիւն. գիտական պատ-
րաստութիւնն էլ չպիտի հասկանալ պարզ պատրաստութիւն,

այսինքն տեղալ մասնագիտութեան համար համալսարանական կրթութիւն: Ի դէպ ասեմք, որ համալսարանական կրթութիւնն ու կեանքի փորձառութիւնը բաւական չէ, որ մէկը ձեռնարկի գիտական տերմինների փոխադրութեամբ պարտաւել, եթէ այդ աշխատանքը սովորական բառարանական թարգմանութիւն չի ենթադրում:

2.

Նախընթացում մենք առաջ բերինք նւագագոյն պահանջները, որոնք բոլորը մի բան են ասում, որ որ և է գիտութեան տերմինների փոխադրելիս ոչ միայն օտար լեզուի այդ գիտութեամբ պարտաւած լինելն է հարկաւոր. այլ նաև ազգային լեզուի:

Տեղալ խնդրի առմամբ, այն անունները, որ առաջ են բերւած զրբի առաջաբանում, մեզ ոչինչ չեն ասում, բացարձակ կերպով ոչինչ: Այդ մարդկանցից և ոչ մէկն էլ հայ գրականութեան մէջ իրաւունքի գիտութեամբ պարտաւած չեն, աշխատանքներ հրատարակ հանած չեն: Սա արդէն մի առարկելի պակասութիւն է: Երկրորդ հերթին նկատելու ենք, որ բառարան կադմոգներին և ամբողջ խմբագրական մարմինն անձանօթ են մնացել Հայ գրականութեան մէջ դոյութիւն ունեցող աղբիւրներ և աշխատութիւններ, որոնք, չկարծեմ թէ, անպէտք լինելին այդպիսի մի դործի համար: Լրացնելու համար ասեմք, ա. Հայոց կանոնգիրք. հրատարակութիւն Ղուկասեան մատենադարանի, 1914 թ. Թիֆլիս. որ շատ աւելի կարեւոր է, քան նոյն իսկ Միֆար-Գօշը. բ. Ասորական դատաստանագիրք, 1917 թ. Վաղարշապատ. գ. Մեքառ իւսանի դատաստանագիրք, 1918 թ. Վաղարշապատ. գ. Հայոց Հին իրաւունք, 1913 թ. Ալէքսանդրապոլ. և. Միֆար-Գօշի դատաստանագրքի մասին Խառնմատերութիւններ, Հանդէս Ամսօրեայի մէջ. Խ. Սամուէլեանի. գ. Das Kleinarmenische Rechtsbuch. Յովսէփ Կարսաթի, և այլն: Բացի վերջինիցս, մնացած բոլորն էլ մատչելի էին կադմոգների համար, քանի որ Թիֆլիսում այդ աշխատանքներից կարելի էր գտնել շատերի մօտ: Եթէ մեզ ասեն, որ իրենք անտեղեակ էին այդ բոլորին, դա կրկին անգամ փաստում է մեր նախընթաց ասածը, որ բառարան կադմոգները Հայ գրականութեան տեղաւորներին անձանօթ են, իսկ եթէ գիտէին ու անտես են առել, այն էլ ձեռքի տակ ունենալուց յետոյ, հապա դա գրական էտիկային դէմ է, ու այդ աշխատանքները չյիշելը մի ագեղ երևոյթ:

3.

Առաջարանը մանրամասն բացատրում է ոչ միայն բառա-
րան կազմելու եղանակը, այլ նաև ամբողջ աշխատանքի ըն-
թացքը: Ամբողջը մենք գտնում ենք բանաւոր, ու Հայ-Փաստի
ձգտումը՝ տալ մի գործ նախընթաց, ըստ իրենց, կասենք, ճիշտ
ըմբռնման, հիմնաւոր աշխատանքից յետոյ: Ասել է, խնդիրն ըմ-
բռնել են ճիշտ, հասկացողութիւններն իրար մօտ արտայայտել
են ամողջ տրամաբանութեամբ: Այս բոլորն ապացուցանում են,
թէ ինչպիսի երկիւղածութեամբ և խորը մտածելով են ձեռնար-
կել իրենց առաջադրած նպատակին:

Այս գործի քննադատութեան մէջ ոչ մի յանդիմանութիւն
չի կարող հասնել ոչ Ատեփան Մալխասեանին և ոչ էլ Մանուկ
Արեղեանին: Երկուսն էլ իրաւարան չեն, այդ գիտութեամբ չեն
պարտաւել, ուստի և ենթադրւած մտածելակերպը չունեն: Մենք
խոնարհւում ենք Մալխասեանի Հին Հայերէնի հմտութեան առաջ,
գիտենք, որ Արեղեանը Հայ գրականութեան լուադոյն ծանօթ-
ներից ու ուսումնասիրողներից մէկն է, բայց ոչ մէկը և ոչ էլ
միւսը Հայ-Փաստի ձեռնարկած գործի համար մեծ կարեւորու-
թիւն չունեն: Լեզուն գիտնալը բաւական չէ, եթէ պակասում է
պահանջւած ըմբռնողութիւնը: Ի դէպ առհնդ, որ եթէ նորա լու-
ըմբռնէին սուսերէն, օրինակ, приданое բառը, այն ժամանակ
երբէք չէին թոյլ տայ, դրա դէմ դրէր «օժիւ» բառը: Հայ հին
գրականութեան մէջ այդ բառը շատ քիչ անգամ է գործածւել,
բայց և ոչ մի անգամ приданое մտրով: Приданое և օժիւ բառը
լու հասկանալու համար տնտրաժեշտ է Հոովմէական իրաւուն-
քին լու ծանօթ լինել ու իրարից տարրերել երկու տերմին—
Dotes և donatio propter nuptias. Թուաներն այս վերջին տերմինը
չունեն, այլ միայն dotes-ը այսինքն приданое = հետը տրւածը,
այլ խօսքով այն, ինչ որ աղջիկն իր հօր անից տանում է իր
հետ ամուսնանալիս: Հայ լեզուն դրա համար ունի մի շատ գե-
ղեցիկ տերմին, որ դեռ պահպանւում է ժողովրդական լեզուի մէջ,
դա է «բաժինէր»: Dotes, приданое, բաժինը, իրար լիովին ծած-
կում են: Բաժինը բառը Հայ ընտանեկան իրաւունքի, բայց նամա-
նաւանդ ժառանգական իրաւունքի մէջ այնքան կարեւոր նշանա-
կութիւն ունի, որ նրանով բնոյթագծւում է Հայ իրաւունքն
ինքը՝ իբր արեական իրաւունքի մի ճիւղ: Այս բանը կարելի է
չգիտնալ, նոյն իսկ չհասկանալ, բայց ինչպէ՞ս կարելի է անծա-
նօթ լինել գրականութեան ու մի մշակող գիտութեան, երբ աշ-
խատողների հիմնաւոր նպատակն այն է, որ իւրովսանն օգ-
նեն այդ գիտութեանն ու լեզուին: Բայց սա թողնենք, հին ցաւ է

չտեսնողս ձեանալ նախընթաց աշխատողներին, և իրենցով միայն ամեն բան սկսած լինելը տենչալ Հայերէնի մէջ օժիտն այն ընծան է, որ տղան տանում է աղջկան, դա, կուզէք, աղջկայ գինն է, նրա կուտութեան փոխարժէքը, Հոովմէական իրաւունքի մէջ դա ձեւորւում է donatio propter nuptias տերմինով:

Մալխասեանն այդ բանը կարող էր ամենեին չգիտնալ, սակայն իրաւաբանական բառարան կազմելու յանդգնութիւն ունեցող մէկը միթէ՞ չպիտի գիմէր նախ գիտութեան, այնտեղ ստուգէր ըմբռնողութիւնը և ապա գիմէր իր հայրենի լեզւին, ու տեսնէր այդ ըմբռնողութիւնը կայ այնտեղ, թէ ոչ: Ահա ինչո՞ւ ենք ասում, որ անհրաժեշտ է գիտութեամբ սլարսլաւած լինելը: Եթէ Մալխասեանին ասէին, թէ գիտութեան մէջ երկու տերմին կայ, նախ այն, որ ամուսնանալիս (տղան կամ նրա աղականները) ընծաներ են տալիս աղջկան, լատիներէնում դա կոչւում է donatio, և այլն. և երկրորդ այն, որ աղջիկն իր հետ է վերցնում հօր տանից՝ մարդու գնալիս: Երբ այս երկու հիմնական մտքերը բացատրէին Մալխասեանին, ես համոզւած եմ, որ նա donatio-ն կթարգմանէր օժիտ, իսկ dos-ը կը փոխադրէր բաժինք. քանի որ նրան հին լեզւից յայտնի է, թէ օժիտը գործ է ածւած իսկ ու իսկ donatio-ի մտքով: Այս օրինակը, թէև չնչին, սակայն ակնբախ է անում այն անպատրաստութիւնը, զոնեա անփութութիւնը, որը կիրառւել է որ և է տերմին փոխադրելիս:

Անցնենք բառամթերքին:

4.

Եր. 1.

1. Ամանս բառն անտեղի է թարգմանել, վճարելիքի հետ նա կապ չունի, ուստի և կանխավճար չէ, այլ ծախսի համար բաց թողնուելիք գումարի անորոշ մասն. կանխավճարը հուսաար է ЗАДАТОКЪ-ին, որ թարգմանւել է հաւատչէք, և այն՝ միանգամայն անտեղի:

2. Աֆտոնօմիա չի նշանակում ինքնօրինութիւն (самостоятельность), այլ ինքնավարութիւն. յունարէն (աֆտօ)նոմոս բառը, ճիշտ է, նշանակում է օրէնք ևս (գլխաւորապէս) սակայն միտքը, նոր առումով, ինքն իրեն վարելուն, կառավարելուն է վերաբերում, ուստի և բառացի թարգմանութիւնն անտեղի է:

3. Ադատ. հայերէն՝ սովորոյթ.

4. Մոռացել են աղարատ բառը, իսկ բախտախաղ փոխադրութիւնը շինծու է, ու ոչ ճիշտ արտայայտիչ տւեալ մտքին: Եթէ չխուսափէին աղարատ բառի թարգմանութիւնից, հարկադր-

ւած պիտի լինէին նաև մի բառ թիւել գործադրութեան մէջ եղող շաղարտի ընկնել տերմինի փոխարէն, որի մէջ կայ «մոլութեան» մտքի խոշոր էլէմենտներ:

Եր. 3.

5. Ապէլացիա չէ, այլ ապէլլիացիա, որի դէմ առկոչ բառը շատ է բռնադրոսիկ և ակնհրե թխած՝ ում կողմից և լինի. իրաւարանական հին աղբիւրների մէջ այդպիսի բառ գոյութիւն չունի:

Եր. 4.

6. Իրաւարար գուցէ վատ չէ, բայց իրաւորք (арбитражъ) ուղղակի անմիտ է.

7. Բազամ. ինչո՞ւ չէ թարգմանած ծանրոց:

8. Բանկրօտ և այլն, հայերէն ասում են սնանկ, սնանկութիւն:

9. Կոս (всрѣча) սխալ թարմանութիւն է. մողովրդի մէջ ասում է կոս ու բէկեառ, և դա այն աշխատանքն է, որ արւում է պետութեանը հարկի մի ձևի առմամբ: Բարդչինան կալւածատիրոջը արւած աշխատահարկն է, ով և լինի այդ կալւածատէրը, իսկ կոս ու բէկեառը՝ պետութեան և իշխանին: Հին դատատանադրքերի մէջ կայ աշխատել «յիշխանն», «յարքունին»:

Եր. 5.

10. Անհետ քաջակայութիւն երկար բառ է և քիչ միտք ունեցող, կայ առկի լաւն ու գործածականը՝ տարակայութիւն.

Եր. 6.

11. Անէտիկ, աստանան կարող է հասկանալ, թէ դա նշանակում է безсрочный, և այդ բոլորը նրանից. որ срок (82 եր.) բառը թարգմանել են կէտիկ, հետաքրքիր է ինչպէս պէտք է թարմանել срочно.

12. Безуміе նշանակում է անմտութիւն, безумный նշանակում է անմիտ, խելառ, և այլն և ոչ հաշմանիտ և այլն:

13. Безчестіе թարգմանել են պատւազին, դա կնշանակէ, կարծեմ, պատւազրկութիւն:

14. Իւրաքանչեւ գոյք չի նշանակում благопріобрѣтенное имущество, այլ արդար ճանապարհով ձեռք բերւած գոյք, կամ ինչպէս արդէն թէ հնումն և թէ այժմ հայերէն ասում են՝ ազգափաստակ.

15. Սոսկ և սոսկիկ բառերը անմիտ թխածքներ են.

Եր. 7.

16. Հայերէնում մոլեղին խելացնորութիւն չկայ, այլ մոլեղնութիւն որ կնշանակէ ճիշտ ու ճիշտ՝ *блѣнное помѣшательство*. խժութիւն բառն անտեղի է, ու խելագարութեան կամ մոլէղնութեան հետ գործ չունի. խժութիւն կարելի է անել առանց խելագար կամ խենթ լինելու. դրա հակառակ խելագարն ու խենթը խժութիւն չեն կարող անել. Մինչդեռ մոլէղնութեամբ և խելառութեամբ բռնածի գործողութեանց մէջ պատճառական կապ չկայ, դրա հակառակ խժութիւն անողը գիտակցում է իր արածը, այս բաները կարծեմ հարկաւոր է հասկանալ, երբ ուսեքէն *блѣство*-ն է թարգմանում. Չենք միտում, որ փոխարեւորաբար գործ է անում *блѣство* բառը նաև իրապէս ոչ խելառ մարդու գործողութիւնները բնորոշելու համար, բայց դա միայն փոխարեւորաբար, ճիշտ այնպէս, ինչպէս մենք ասում ենք, ի՞նչ գիժն է, ի՞նչ կատաղին է, և այլն.

Եր. 8.

17. *Вадюта*-ն ոչ փոխարժէք է, և ոչ էլ արժանք, այլ ուղղակի վալիւտա.

Եր. 9.

18. Մուրհակ առ պահանջ վճարելի և ոչ ի ցոյց.

19. Վերդիկտը հաւասար է վճռին, որոշման, զարմանալի բան, վալիւտան և այլ բաներ թարգմանում են, և այն էլ անյարմար բառեր դնում, իսկ վերդիկտը թողնում՝ առանց փոխարինելու արգէն գործածութեան մէջ եղած բառով:

Եր. 11.

20. *Владѣльческія* *некъ* թարգմանել են տիրողական հայց. նախ խօսքը վերաբերում է տիրապետական կամ սեփականատիրութեան իրաւունքի հայց, և ոչ թէ տիրողական, այսինքն տիրողի հայց, տիրողի պատկանող հայց: Չպիտի մոռանալ, որ այդ տերմինի մէջ ծանրութեան կենդրոնը ոչ թէ հայցի կամ հայցելու վրայ է, այլ այն իրաւունքի վրա, որ տիրապետողին է պատկանում.

Ճիշտ է, աւետարանի մէջ և այլ ուր պատահում ենք հայցել բային, որ կնշանակէ պահանջել, որոնել, խնդրել, սակայն ներկայ դէպքում գտնում ենք անտեղի նրա գործածութիւնը, քանի որ նոյն միտքն արտայայտող բառ ունենք, այն է՝ պահանջ, որ քաղաքացիութիւն է ստացել.

Եր. 13.

21. Տարիք բառի տեղ պէտք էր դնել հասակ բառը, և ապա, երկրորդաբար միայն՝ տարիք.

22. Խօսքը վերաբերում է ոչ թէ խախտւած տէրութեանը, այլ տիրապետական իրաւունքի խախտմանը. որովհետեւ միաքնայդ է, ուստի և ռուսերէնը պիտի լինէր восстановление нарушенного права владѣнія.

23. Թարգմանիչը չի կարողացել տարբերել իրարից военная և военская բառերը, ու տարբեր միտք արտայայտող այդ բառերը նայնացնելով, դուրս է բերել երկուսն էլ գինւորական, մինչդեռ նորա իրարից տարբեր մտքեր ի նկատ ունեն. առաջին, военная, նշանակում է գինւորական, պատերազմական, ռազմական, իսկ երկրորդը, военская, նշանակում է գինւորական: Նոյն թարգմանիչների կարծիքով новинность նշանակում է պահույթիւն, դա ի հարկէ, արտուրդ է, խօսքը պահույթեան չի վերաբերում, այլ պարտաւորութեան, այսինքն՝ գինւորապարտութեան (թերեւ գինապարտութեան կամ զօրապարտութեան).

24. Նոր բառեր թխելու մէջ բաւականին առաջ գնալով, գրքի խմբագրողը շփոթել է իրար և մի անւան տակ դրել՝ заведение, учреждение, երկուսն էլ «հիմնարկ» դուրս բերելով: Բաւականին անորոշ է, թէ ի՞նչ է նշանակում հիմնարկ: Մեր լեզւի բառակազմութեան հիմամբ՝ նա պիտի լինէր հիմնարկութիւն, ու ներկայ դէպքում՝ հաստատութիւն.

25. Ինչո՞ւ արգելումն, և ոչ արգելք,

26. Վերլնթաց և ոչ վերել գիծ.

Եր. 14.

27. Արդառոց արտայայտութիւն է հակընդդէմ հայց-ը. ի՞նչ է նշանակում հակընդդէմ: Այդ տերմինի մէջ էականն այն է, որ դէմդ եղած պահանջի հանդէպ ինքդ հակառակ պահանջ ես յարուցանում. այսինքն՝ մի պահանջի հակադրում ես մի այլ պահանջ. встречный այս մտքով կլինի և է իրապէս՝ հակադիր պահանջ: Ժողովրդական դարձուածների մէջ կայ մէկը, որ անշուշտ հին իրաւաբանականութեան հետքերն է կրւում իր մէջ և ներկայ դէպքում միանգամայն համապատասխան է встречный жесть տերմինին, այն է դիմադարձ պահանջ: Դիմադարձութիւն անել, ներկայ մտքով նշանակում է հակառակել. հակառակութեան դէմ հակառակութիւն դարձնել, դիմադարձ լինել: Ըստ այսմ պիտի լինի կամ հակադիր կամ դիմադարձ պահանջ.

Եր. 15.

28. ВЫГОНЪ-ն այն տեղն է, ուր քշում են նախիրն արածելու, մի բարրառում նախարատափ կարող է կոչւել, մի այլ բարրառում դա կոչւում է նախարատեղ, մի այլում արօտ, արածատեղ և այլն: ВЫГОНЪ յատուկ տերմինը մենք չունենք, բայց ունենք արօտատեղ, որն և գործ ենք անելու:

29. ВЫЗОВ-ի դէմ իկակոչն անհամապատասխան է. ինչպէս թարգմանենք ВЫЗОВЪ СВИДѢТЕЛЕЙ-ը, իկակոչ վկաների և ինչպէս ոչ վկաների կանչելը (կամ կոչելը):

30. Վիժուկ՝ ոչ որ չի հասկանալ, էլ չասեմ, որ ВЫКЛЮЧЕН երկու միտք ունի, մէկ՝ գործողութիւնը և մէկ էլ հետևանքը. առաջինը կոչւում է ժողովրդական բարրառում անցուցք (անել), գրականում վիժել, երկրորդը կոչւում է վիժւածք:

21. ВЫКУПЪ միայն փրկանք չէ, այլ նաև յետգնումն:

32. Նորութիւն է, որ անշունչ առարկան էլ կարող է ժառանգ ունենալ. խօսքը ժառանգ ունեցող գոյքին է վերաբերում, այդպէս են ասում Թիֆլիսի մեծ իրարանները — անժառանգ գոյք, և այն էլ ВЫМОРОЧНОЕ ИМУЩЕСТВО-ի փոխարէն. վերջինս նշանակում է մի կալւածք, որ սեփականատիրոջ սերունդը կտրուելուց, ոչնչանալուց յետոյ՝ մնացել է անտէր: Սա ինչպէս կարելի էր թարգմանել՝ անժառանգ գոյք:

Եր. 16.

33. ВѢДОМСТВО-ն թարգմանել են վերադիտութիւն, բայց գործածականը վարչութիւն է, օրինակ՝ դպրոցական վարչութիւն, հոգևոր վարչութիւն և այլն:

Եր. 17.

34. Ինչպէս հոնորար և ոչ վարձատրութիւն:

Եր. 26.

35. ЗАЖИГАТЕЛЬСТВО այրեցողութիւն չէ. սուսերէն խօսքը կարծեմ կնշանակէ ուտել, խմել, անզուսպ վատնել և այլն, սրանից այրեցողութիւն դուրս կուգայ:

36. ЗАОЧНОЕ — փոխադրել են միականի. Դատավարութեան մէջ այն վճիռը, որ կայացել է կողմերից մէկի բացակայութեան՝ կոչւում է ЗАОЧНОЕ рѣшеніе, այսինքն. ինչպէս գործածութեան մէջ արդէն ասում է, բացակա վճիռ. յամենայն դէպս սա լաւ է, քան միականի:

Եր. 29.

37. Մեր բարբառներից մէկում վերվերի, վերվերունի, և այլն, նշանակում են թեթև գույն ունեցող, քամօտ, շուտ բորբոքող: Запущенъ և վերվերիչ թարգմանելն ուղղակի անհնար է, քանի որ նա կնշանակէ խռովութեան մի այլ բանի գրգռիչ, գրգռող, յուզող և այլն. մինչդեռ վերվերի (նրա հետ նաև վերվերիչ) ծաղրական մականունն է:

Եր. 30.

38. Տեղավար հիմնարկ. միտք չկայ, ինչո՞ւ համայնային հիմնարկութիւն չասել, կամ տեղային ինքնավար հիմնարկութիւն, կամ համայնային (գեմատիային) հաստատութիւն):

39. Չար դիտումն. ինչո՞ւ ոչ դիտաւորութիւն. չէ՞ որ դիտումն այլ բան է նշանակում, օրինակ իմ դիտումներն այս ու այն բանի մասին, այսինքն դիտելը, և այլն.

40. Ոսկեհան կնշանակէ ոսկի հանող, ինչպէս հողահան, և այլն. մինչդեռ ոսկի արդիւնաբերողը ոսկի չի հանում (դա անում է բանւորը), ուրեմն պիտի ասել ոսկի արդիւնաբերող (золото-промышленникъ).

Եր. 31.

41. Имущество, առաջին հերթին ստացւածք և ապա կայք և գոյք.

42. Имѣніе, կալւածք.

43. Иновѣрецъ, ոչ այլահաւատ, այլ այլադաւան, ըստ այդմ յունադաւան, ուսւադաւան, և այլն.

Եր. 32.

44. Կատարողական թերթ, ինչպէս այժմ են գործածում, և ոչ թէ թուղթ.

45. Истецъ. պահանջատէր և ոչ հայցաւոր.

Եր. 34.

46. Դիւանական կամ դիւանային տուրք և դիւանատան.

47. Չարմանալի են բառարան կազմողները մի տեղ նոյն բառի համար ընդունել են բեկումն, միւս տեղ բեկիչ. կամ պիտի լինէր բէկման գանգատ և բէկման վճիռ և կամ երկու տեղն բէկիչ: Փանդատ բառը չի համադաստատանում խնդրի (кассаціонная жалоба) էութեանը. վճարբէկման գանգատ չին տալիս, այլ բողոք. քանի որ խնդրատուն բողոքում է տրւած վճռի դէմ,

հիմնաւորում է իր բողոքը և խնդրում վճիռը բեկանել: Մինչդեռ գանգատ ներկայացնելիս դատարանը երբորդ անձն է, ոչ շահագրգռած կողմը, վճարէկ բողոք ներկայացնելիս գանգատւորը կամ գործը տանող կողմն են երբորդ անձն: Բողոքը տրւում է ոչ այն անձի դէմ, որ գործը տարել է, այլ դատարանի (նրա դուրս բերած վճռի) դէմ: Սոքա պարզ ըմբռնողութիւններ են, որ ամեն իրաւարան պարտաւոր է հասկանալ: Ես կդնէի վճարէկ բողոք և վճարէկ որոշումն: այս վերջինն այսպէս է այն պատճառով, որ բարձր ինստանցիան (կասսացիօն) վճիռ չի կայացնում ըստ էութեան: այլ քննում է գործը և դնում իր որոշումը այն մասին, թէ դատավարութեան ընթացքն ու հետեանքը համապատասխան են կայացրած վճռին՝ թէ ոչ: Ըստ այդմ жалоба և թէ protest երկուսն էլ պէտք է հայերէնում դնել բողոք: Մեր դատավարութեան մէջ հո պարտական չենք ուստական բոլոր բառերն էլ թարգմանել և խճողել մեր տեղւորները:

48. Ինչո՞ւ կացարան և ոչ բնակարան, և ինչո՞ւ կացարանային հարկ, և ոչ բնակարանային տուրք, որն աւելի հնչիւն է և աւելի համապատասխան:

Եր. 36.

49. Ինչո՞ւ չկան կողեքս, կող/ֆիկացիա, коммерческое предприятие, և այլն:

50. Անշափահաս յանցագործների և ոչ յանցաւորների:

Եր. 38.

51. Кошувство սրբապղծութիւն և ոչ սրբանարգանք:

Եր. 39.

52. Купля—продажа. купля չի նշանակում գին. այլ գնել, առնել, продажа-ն էլ վաճառ չէ այլ վաճառումն, ծախել. հայ մարդն ասում է առ ու ծախ. предметъ купли и продажи=առ ու ծախի առարկայ, և այլն:

Եր. 40.

53. Ծրաթումբ չէ, այլ մեր լեզուով ասում են սահմանափար. անպատճառ հարկաւոր չէ, որ курганъ-ը թարգմանենք:

54. Ликвидация կնշանակէ վերջահաշիւ. լուծարքն անհասկանալի բառ է:

Եր. 41.

55. Մակկեր բառի կողքին կարելի էր դնել միջնորդ.

56. Ծիր չէ, այլ սահմանագիծ. ծրումն չէ, այլ սահմանագծումն, և այլն ըստ այդմ.

Եր. 46.

57. Ապառիկ և ոչ ապառք.

58. Ապօրինի դատակներ տերմինը պիտի բոլորովին դուրս ձգել, իբր անպատուարեր անւանումն, քանի որ նոյն իսկ հին սեփի օրէնքն այդ բանը վերացրել էր:

Եր. 48.

59. Անատեան օր չէ, այլ ոչ ատենական օր:

Եր. 49.

60. Վզեան բառը կիլիկեան հալերէն է, խմբագրողները վերցրել են Սմբատի դատաստանագրքից, որը չեն յիշել աղբիւրների շարքում. դա արդէն լաւ չէ:

Եր. 50.

61. Հռչակումն անյարմար է. պէտք է դնել հրապարակումն.

Եր. 55.

62. Տարկէտումն շատ խրթին է, հասկանալին կլինէր յետաձգումն.

63. Օտարել չէ, այլ օտարացնել, որ արդէն գործ է ածւում.

64 Պահպանողական և ոչ պահպանական:

Եր. 57.

65 Վերաբաժանք չէ, այլ վերաբաժանումն.

58.

66. Порошение, մարումն չէ այլ հանգչումն. ասում են պարտքի հանգչումն և ոչ մարումն. քանի որ մարել ժողովրդականի մէջ նշանակում է նստի ուշաթափւել. порошение եթէ կրակի համար է, այն ժամանակ կաշիլի է ասել մարել, իսկ խօսքն ասել մուրհակային կամ առնարական իրաւունքի տերմինի այն.

մասին և է, ուստի և մեր առաջ բերած բանն է ընտրելի ու տեղին:

Եր. 59.

67. Ինչո՞ւ կեղծարք և ոչ կեղծիք, որ գործածականն է, ինչ որ ПОДЛОГЪ-ի մասին է:

Եր. 60.

68. Подсудимый դատելի չէ, այլ ամբաստանեալ. ամեն ամբաստանեալ դատելի չէ, և ոչ էլ դատելի կնշմնակէ ամբաստանեալ: Ասում են նաեւ մեղադրեալ, որ աւելի ճիշտ է, քան դատելին, բայց դարձեալ նոյնը չէ: Բառարան կազմողները, այդ ապացուցւում է շատ փաստերով, աշխատել են թարգմանել բառացի: միւս կողմից էլ, երեւի, քիչ են հետաքրքրւել իրաւաբանական տերմինների բառապաշարով: Էականը միտքը հայ բառով արտայայտելն է:

69. Подчистка եղծւածք և ոչ բերւածք, քանի որ խօսքը իբր յանցագործութեան տերմին է առաջ բերւած, քերւածքը պարզ գործողութիւն է, իսկ եղծւածքը ենթադրել է տալիս յանցագործ դիտաւորութիւն:

70. Կենսատե անյարմար է, գործածականը ցկեանս է, այդ էլ պիտի վերցնել:

Եր. 61.

71. Поколение ոչ զարմ, այլ սերունդ, որ և ճիշտ է, և գործածական և իր մէջ պարունակում է և զարմը, որ աւելի փոքր միաւոր է քան սերունդը, և տոհմը: Զարմ կարող ենք գործածել մի անհատի նկատմամբ էլ, իսկ սերունդը միշտ էլ հաւաքական է:

Եր. 62.

72. Աւելի դիւրանշիւն է հարկադրանք տարումն (оттварումн) քան ստիպողական:

Եր. 63.

73. Որոշումն, սահմանումն (սահմանելը) և ոչ կարգադրութիւն:

Եր. 65.

74. Ճիշտն ու գործածականը դատի տալն է և ոչ մատնումն դատի, եթէ վերջինն է ընտրելու, հապա պիտի լինի դատի մատնել:

Եր. 66.

75. Նախամտածած յանցանք աւելի լաւ է, քան նախադիտեալ յանցանք. խօսքը դիտելու մասին չէ, այլ մտածելու, այսինքն գործում է ոչ թէ տեսողութիւնը, այլ միտքը, ուղեղը: Եթէ ընտրւած արմատը պէտք է գործադրել, հապա նախադիտաւորեալ պիտի գործածել:

Եր. 67.

76. Պահանջի (հայցի) կարճումն ունեն, բայց ինչո՞ւ չկայ վճարումների (платежей) կարճումը (կամ դադարեցումը).

Եր. 68.

77. Ինչո՞ւ չկայ приговоръ—վճիռ, որոշում.

78. Приданое=օժիտ. ինչպէս արդէն տակ ինք, օժիտ տերմինի գործածելը սխալ ըմբռնման և խնդրի էութեան անտեղեակ լինելու արդիւնք է. պէտք էր տակ բաժինն.

Եր. 68.

79. Աճ բառը բարբառներում գործ է ածւում տարբեր մտքերով, այսպէս առում են խմորը (ալիւրը) աճկուն է, ինչպէս և անասնեղէնի մասին: Հին դատաստանագրքերի մէջ աճ. բառը գտնում ենք միայն անասնեղէնի համար: Приростъ բառը կարող է գործածւել ինչպէս հաւաքական (օր. ժողովուրդ) գոյականների համար, այնպէս էլ անշունչ առարկաների համար, բայց անասնեղէնի համար՝ երբ խօսքը վերաբերում է ծնելով բաղմանալուն՝ երբէք:

Եր. 71.

80. Производство միայն վարութիւն չի նշանակում, միւս մտքերն էլ պէտք էր գնել.

Եր. 72.

81. Ի՞նչ է նշանակում կէտատութիւն, որ դրիւ են разсрочка-ի դէմ: Կէտիկ (сроки) դրիւ են իբր պայմանաժամ: Զւարճալի կլինի եթէ ժողովրդական օրինակ պոչատ և այլն բառի համեմատ, կէտը դարձրել են կէտատ. բայց զարձեալ միտք չի դուրս գալ: Պոչատ՝ կնշանակէ պոչը կտրած, այդ առումով պիտի աշխատենք հասկանալ կէտիկը (կէտատ) կտրած, այսինքն պայմանաժամը կտրած. բայց խօսքը պայմանաժամը կտրելու (սահմանելու կամ կրճատելու) մասին չէ, այլ նշանակւած ժամա-

նակը երկարելու, յետաձգելու մասին: Ինչպէս տեսնում էք, կէտաւորութիւն բառն ուղղակի արտուրդ է:

82. Раставіе պղծութիւն չի կարելի թարգմանել, բայց մծղնէութիւն՝ տեղին է, թերեւ: Եթէ կուտութեան խախտելու մասին է խօսքը, դա պիտի թարգմանել բռնաբարութիւն կամ կուտութեան խախտումն: Իսկ раставіе բառը հասկացում է անշափահասների (այսինքն անժամանակ) սեռական գործարանների բռնի փշաջնելը:

83. Ամուսնութեան լուծումը գրել են բայց մոռացել են պայմանի, դաշնի և այլն լուծումը կամ քանդելը:

84. Расточитель պէտք է թարգմանել առաջին հերթին վատնող, ապա շռայլող:

Եր. 74.

85. Реестръ. ցուցակ, ցանկ և ապա տոմար.

86. Революція եղբակացութիւն.

87. Տոհմային աւելի լաւ է.

88. Աղղակցութիւն՝ աւելի ճիշտ է.

89. Родъ տոհմ, ցեղ, տեսակ.

Եր. 75.

90. Самоуправство կամայականութիւն.

Եր. 76.

91. Օրէնքներ կամ օրէնքների հաւաքածու և ոչ թէ հաւաք օրինաց.

92. Святотатство սեղանակապտութիւն, որ գործածական է այժմ և յայտնի տերմին է մեր դատաստանադրքերում, կարող է նշանակել նաև սրբապղծութիւն.

93. Секвестръ չի կարելի պատանտումն թարգմանել.

Եր. 77.

94. Скопецъ թարգմանել են կրտիկ, երբ կայ ներքինի բառը. եթէ այդ բառը չեն հաւանել, և ցանկացել են անպատճառ բարգմանել, հապա պիտի դնէին կոտած.

Եր. 78.

95. Ինչձե խոսն և ոչ ամբոխ.

96. Скотоложество հնումն միշտ գործ են ածել անասնապղծութիւն.

Եր. 80.

97. Ինչո՞ւ ոչ խորհրդարան, կամ աւելի լաւ՝ խորհրդա-
սենեակ.

Եր. 81.

98. Составъ կազմ, ունեն, բայց չունեն составъ судей դա-
տարանի (դատաւորների) կազմը. բայց որ գլխաւորն է, քրէա-
կան իրաւունքի հիմնական տերմիններից մէկը չունեն, աչքաթող
են արեւl составъ престѣленія յանցանքի բնոյթը, էութիւնը.

Եր. 82.

99. Ինչո՞ւ տեղեկանք և ոչ տեղեկութիւն.

100. Суда միթէ փոխառութիւն չէ.

101. Միթէ суда имущества կնշանակէ անօթ, որ գործա-
ծական չէ և ոչ ոք չի հասկանայ.

Եր. 84.

102. Страхъ, ահ, երկիրդ, ապահովագրումն.

Եր. 85.

103. Սուր յիշողութիւն՝ աւելի լաւ է, քան հաստատ յիշո-
ղութիւն, և գործածականը նա է.

104. Փշացող գոյք, և ոչ եղծանար գոյք.

Եր. 89.

105. Կողմնակի փաստներ ենք ասում և ոչ կորուստ.

Եր. 93.

106. Դատական հիմնաւէկութիւնների (կամ հաստատու-
թիւնների) կանոնադրութիւն.

Եր. 94.

107. Առաջ փնտ, ապա զիան, որ հայերէն չէ.

108. Ինչո՞ւ ոչ գործարան, այլ ֆարրիկա.

109. Ինչո՞ւ ոչ փաստային կամ փաստացի տիրութիւն, կամ
գործի փաստային կողմը.

Եր. 96.

110. Ինչո՞ւ ոչ քաղաքացիական իրաւունք, այլ ցիվիլ.

Եր. 100.

111. Ինչո՞ւ չկայ явотный порядок.

էլ բաւական է. ընթերցողի համբերութիւնն էլ տարանք: Թւի թէ աւելի լաւ էր նստէինք նոր բառարան կազմէինք, քան թէ այսքան երկար կանգ առնէինք այս բառարանի թերութիւններն զրա:

Այս բառարանն ունի նաեւ առաւելութիւններ. առաջին անգամն է, որ փորձ է լինում գիտական տերմինների մի ժողովածու կազմելու, որ արժանի է ամեն խրախուսանքի. ք. այս փորձն մի աւելորդ անգամ ապացուցում է, որ առհասարակ բառարան կազմելը, նամանաւանդ մեզնում, խմբական աշխատանքով պիտի լինի. գ. այս բառարանն իբր փորձ, համեմատարար լաւ է.

5.

Իրաւունքի տերմինների բառարան կազմելու համար այն պաշարը որ ունեցել է խմբադրութիւնը, բաւարար չէ: Իրա համար մեր լեզուն ունի խոշոր չափով բառապաշար, թէ գրականի և թէ գաւառաբարբառների մէջ. նախապէս պիտի հաւաքել, ի մի խմբել այդ պաշարը, մեռած հնի ձևերը, որ որոշ չափով ապրում են ժողովրդական լեզուի, ասացւածների, պատմութիւնների հէքիաթների և պատմական յուշարձանների մէջ. ի կեանս պիտի կոչել: Բառարան կազմողների մէջ միայն Մալխասեանն ու Արեղեանն են, որ տեղեակ են, ուսումնասիրած են մեր ասած նիւթերը, ինչպէս և օգտադործած, սակայն գիտութեանց այլ ճիւղերում: Նոքա եթէ իրաւաբան լինէին, օրինակ ժողովրդական բաների վրա այլ ուշադրութիւն կդարձնէին: Նոքա, գիտեմ որ ծանօթ են, օրինակ, միջու և մաջու բաները. այս բառարանը կազմելիս նոքա այդ արտայայտութիւններից համապատասխան գործադրութիւնը կանէին: Այսպէս, Մաջուն, համայնական արմայնական արտելի ձե է. երբ, օրինակ, գիւղի հարս ու աղջիկ հաւաքւում են իրենցից մէկի առնը բուրդ գզելու, նոյնը կըրկնելով իրենցից իւրաքանչիւրի տանը: Միջուն էլ մի արտայայտութիւն է, որ ազդեցութիւն է ունեցել միջնադարեան (XIV-դ). գերմանական տնտեսութեան (National ökonomie) տերմինոլոգիայի վրա և առաջ բերել ժողովրդական տնտեսութեան մի ձև, մի ըմբռնողութիւն: Միջու նշանակում է, թէ մի խումբ մարդիկ, մի համայնք կարող են ունենալ մի տափ, մի արտ, տնտեսական մի այլ արժէք՝ ընդհանուր (միջու) օգտւելու պայմանով: Սեփականատէրը մէկը չէ, այլ ընդհանրութիւնը, համայնքը, և այլն: Այսպէս կան նաեւ շատ ժողովրդական բաներ, որոնք այս կամ այն իրաւաբանական ըմբռնողութիւն են պարունա-

կուճ իրենց մէջ, ու գիտութեան համար ցարդ մնացել են ան-
ծանօթ: Բառարան կազմելիս, ահա, պէտք է ծանօթ լինել, գիտ-
նալ ա: քոլորը, և ապա ձեռնարկել նոցա օգտագործմանը:

Հիմնարկութիւններին խորհուրդ ենք տալիս չգործածել
հրապարակ ընկած ամեն բառ, որովհետեւ արդէն գործադրու-
թիւն ընկած որ և է տերմին շփոթութիւն առաջ կրեջի, ու յե-
տոյ դժւար կլինի մի ընդհանուր գործածութեան լեզու գտնել:

Մեր ընդհանուր գործն ու աշխատանքը պիտի լինի առ
այժմ նիւթ հաւաքել, ճշտել, խմբական գործակցութեամբ մի
կատարեալ աշխատանք առաջ բերել: Առ պիտի լինի նաև գի-
տութեանց մնացած քոլոր ճիւղերի համար:

Այս բառարանի համար տակիք շատ ունենք ըստ էութեան,
սակայն թողնում ենք, դա չի վերաբերում կազմողներին, այլ
բառապաշարին ու տերմիններին: Առ այժմ այսքան:

Երբ խօսքս վերջացնում էի, աչքիս ընկաւ առաջարանի
(եր. 15) մէջ «Օրէնք թագաւորաց» խօսքերը. հետաքրքիր է,
բառարան կազմողները գիտեն թէ ի՞նչ է այդ աղբիւրը, հրա-
տարակաւ կայ թէ ոչ, և ուր պիտի դիմէին՝ այն ձեռք բերելու:
Ինձ թւում է, թէ աղբիւրների մասին այդ ակնարկը դատարկ
խօսք է, նոքա «Օրէնք թագաւորացի» միտյն անունն են լսել.
Իսկ եթէ այդ անունը նրանց ծանօթ է որ և է երկից, հապա
նոքա պիտի գիտնային, որ դա մէկ չէ, այլ երկու, որոնցից
մէկը՝ Ասորա-Հոռմէական դատաստանագիրք անունով հրատա-
րակւած է 1882-ին մի քանի լեզուներով, իսկ 1918-ին ձեռա-
գրերի նոր համեմատութիւններով, մեր ձեռքով. այս աշխատու-
թեան մի շարք օրինակներ նոյն թւի ամառը զրկւած են
Թիֆլիս և մասնաւոր մարդոց և հայ թերթերին: Անանունը մենք
փոխել ենք, դնելով Ասորական, և ոչ Ասորա-Հոռմէական: Օ-
րէնք թագաւորացի մի այլ դատաստանագիրք (գրչագիր) պատ-
կանում է Բիւզանդական կայսրներին (IV-րդ դարու):

Լաւ չէ չգիտցողս ձեռնալ ու չիմացած բաների մասին
խօսել: Այս էլ այսքան:

Արսէն Ժ. Վաթկապետ
Իրաւարանութեան գովարդ

Մարտ 1920 թ.

